«Անիկա պարտի ծանօթ ըլլալ համաշխարհային հարցերուն, իր բնական երկրին ընկերային, քաղաքական, մշակութային խնդիրներուն, ինչպէս նաեւ՝ մեր հայրենիքի անցուղաբձերուն ու համայնքին մէջ կատարուած զլխաւոր եղելութիւններուն: Անիկա պարտի նաեւ իր մասնակցութիւնը բերել գաղութի աշխատանքներուն: Ծանօթութիւն ունենալ հինի կողքին նաեւ հայ գրականութեան արդի վիճակին մասին: Մարդկային յառաջիմութեան համար ունենալ լայն տեսիլ եւ այդ նպատակին աշխատելու յօժարակամութիւն:

«Տիպար դաստիարակը, այս բոլորէն աւելի պարտի ունենալ արուեստագէտի խմոր, յուզելու եւ համոզելու կարողութիւն, հմայելու եւ հմայուելու ընդունակութիւն, գուարթամտութիւն, ուրիշներուն համակրելի դառնալու բնատուր կարողութիւն, լայնամտութիւն, բացմտութիւն, խանդավառութիւն, ճկունութիւն, ուրիշներուն օգտակար ըլլալու՝ ծառայելու պատրաստակամութիւն, եւ այլն, եւ այլն»:

Կէս դար առաջ ըսուած խօսքեր են ասոնք, որոնք մինչեւ օրս տակաւին կը պահեն իրենց այժմէականութիւնը ու ճշմարտութիւնը:

Ու հակառակ այս բոլոր իրականութեանց, հակառակ մեր կեանքին մէջ հայ ուսուցչիչին ներկայացուցած կարեւորութեան, հին, շատ հին տարիներէն սկսեալ, անոր գործը պէտք եղածին չափ չէ գնահատուած, մանաւանդ Սփիւռքի մէջ, ուր օրն ի բուն հայապահպանում կը քարոզենք, «հայրենի» կը հոյովենք, ուր սակայն ազգային պատրաստակամութիւնը չենք ունեցած երբեք ու կրթական գործը այլ գործերուն շարքին յանձնած ենք գաղութային անջատական ղեկավարութեան (կարգ մը երկիրներ՝ եկեղեցական) խնամքին: Եւ այս կայութիւնը, պէտք է ընդունինք, որ միայն մեր ազգին յատուկ չէ: Այս հարցին կապակցութեամբ պատմական արտաճանաչում մը կատարել նպատակայարմար կը գտնեմ: Արտաճանաչում մը, որ աւելի պիտի ընձայէ մեզի անոր զրոյսապատճառները հասկնալու եւ երկու փեւրուն՝ դէմ յանդիման գտնուող մարդոց մտածելակերպերն ու մտահոգութիւնները ըմբռնելու: Ու որպէսզի սխալ ուղիներով չմտենանք հարցին, անմիջապէս աւելցնեմ, թէ հայ ուսուցչիչին նիւթական գնահատումի մասին չէ խօսքը հոս, հակառակ անոր, որ ան ալ կենսական նկատուելիք հարց մըն է ներկայ ընկերային պայմանները նկատի առած, եւ որուն հանդէպ պատկան մեարմնները, հինէն, այդքան ալ բժանդորէն չեն մտնեցած. յաճախ բոլորն ալ մէկ ջուրով լուացած են: Ըստ իս, այս եւ այլ հարցերու մէջ՝ «մի տեղ, մի բան սխալ կայ»: Բայց անցնինք:

Յամենայն դէպս, հայ ուսուցչիչը, որուն ներկայութիւնը տարուէ տարի կը պակսի Սփիւռքի մէջ, է՛ եւ կը մնայ մեր գաղութային կեանքի արժէքաւոր անձնավորութիւններէն մէկը, որուն անվերապահ կերպով վստահած ենք մեր զաւակներուն մարդկային, ու յատկապէս ազգային դաստիարակութիւնը:

ՍԱՐԳՈ ՇԱՐԱԴՊԱՆԵԱՆ

## ԱԿՆԱՐԿ ՀԱՅՐԵՆԻ ՄԱՍՈՒԼԷՆ

# «ՄԱՌԵՅՈՒԿ» ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՒՂԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

«Ազգ»ը ժամանակ առ ժամանակ անդրադարձել է Վրաստանի հայկական գիւղերուն տիրող իրավիճակին: Յատկապէս ծանր է Մառնուլի շրջանի Յայաստանցի սահմանամերձ հսոժոռնի, Կիւլիպաղ, Ախթորփի, Համախի, Խոխսնէ, Բորածոր, Օժի, ինչպէս նաեւ Շահուսեան, Տամեան, Կարծիր հայկական գիւղերուն, քանզի այդ շրջանը եւս մեծապէս տուժել է երաշտից: Բնակչութիւնը զրկուել է ապրուստի միջոցից, իսկ ոռոգման հնարաւորութիւնները չունեն: Յայաստանի ղեկավարութիւնը ի սկզբանէ ուշադրութիւն է դարձնում Վրաստանի առաւել իոծ հայ բնակչութիւն ունեցող

շրջաններին (Ախալքալաք, Պոկտանովա եւ այլն), առանց հաշուի առնելու, որ վերոնշյալ գիւղերը, յատկապէս Խոժոռնի եւ Բորածորը, պատմական յուշարձաններով հարուստ, ռազմավարական նշանակութիւն ունեցող բնակավայրեր են: Օրերս նորից այցելեցի այդ գիւղեր: Միայն մի քանի րակամ այն է, որ դպրոցներում աշակերտների քիչ չէր նուազել, իսկ Խոժոռնի գիւղում վերջին երկու տարիներին նոյնիսկ աւելացել է: Ամենատեսակից, քերտեւ, մրութիւն է: Գիւղերը գրեթէ լիովին զրկուած են ելեկտրամատակարարումից, եւ բնակիչները ամէ

անգամ ելեկտրակաճուրդի ստանալիս արդէն մոռացած են լինում, թէ մախոր անգամ երբ է այդպիսի «հրաշք» տեղի ունեցել: Սակայն «ուրախութիւնը» ընդամենը մէկ երկու մի ժամ է տեսնւ, այն էլ մի քանի շաբաթ մէկ (երկ երեք օր) միայն: Փաստօրէն վերջին երեք տարում այդ գիւղերի բնակչութիւնից պետութիւնը «ստեղծում» միջոցով շորթել է 19 ամուսն կենսաթոշակ: Ո՛ր են այդ գումարները, միայն Վրաստանի ղեկավարները կարող են պատասխանել, սակայն հարկւրամեակներ շարունակ պապեմական օճախներում ապրող հայութիւնն այսօր այդ գիւղերում աւելի ու աւելի օտար է զգում իրեն զրկուած լի-

Տեղի պիտի ունենայ Կիրակի, 29 Հոկտեմբեր 2000, Գիւտ Խաչի Կիրակի.

Այն հաւատացեալները, որոնք կը փափաքին մատաղցու ոչխար նուիրել կամ մասնակցիլ նիւթական նուէրով, բարեհաճի կապ պահել թաղականութեան քարտուղարութեան հետ, ամէն օր՝ ժամեր 8:00էն 1:00 կամ հեռաձայնել 01-981102-3 թիւերուն:

Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

## MESROBIAN TECHNICAL COLLEGE

HONORABLE RESULTS IN THE OFFICIAL EXAMS 2000  
KINDERGARTEN (JARDINIÈRE) 100% COMMERCIAL SCIENCE 75%

Private Specializations (Officially Recognized)

- Computer Courses
- Foreign Languages
- Business Studies
- Travel & Tourism "Ticketing"
- Jewellery Design
- Diamond Setting
- Wax Modeling
- Make - Up
- Hair Styling
- Computer Repair "Hardware"
- TV & Video Repair
- Car Electricity

THE PIONEER IN TECHNICAL EDUCATION

1- Cambridge University Certificate 2- Private Classes 3- Incredible Payment Facilities

Atax Street, Bourj Hammoud Tel: 01 260 504 - 254 9389 Fax: 01 262 955  
Email: mesrobca@dim.net.lb Web Site: www.mesrobian.com

1982

8.B.P. Working Assured

# Հիբանանեան Մամուլ

## ԵՐԵՍՓՈՒՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ՄԻԱԶԱՅՆՈՒԹԵԱՄԲ

### ՊԸՐՐԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ Կ'ԸՆՏՐԷ, ԻՍԿ ՖԸՐԶԼԻՆ՝ ՓՈՒՆ ՆԱԽԱԳԱՀ

Ինչպես նախապես հանրապետական հասարակական կյանքի մեջ ակտիվ էր աշխույժ երեքշաբթի, 17 Հոկտեմբերին գումարեց իր առաջին նիստը, որուն ընթացքին Նեպի Պրորի վերջնականապես խորհրդարանի նախագահ:

Ստորե քաղաքացիական կու տանը ճոյն օրը լիբանանեան «Սաֆիր» թերթին մէջ լոյս տեսած լրատուական յօդուած մը, որ կը նկարագրէ նախաձեռնող վերջին քննարկը եւ խորհրդարանի նախագահին ունեցած հանդիպումները:

Այսօր՝ երեքշաբթի, 17 Հոկտեմբերին, կը լայտարարուի նոր երեսփոխանական ժողովի պաշտօնավարման նոր շրջանը, որ կ'երկարի մինչեւ Մայիս 2005, նոր խորհրդարանին առաջին գործը պիտի ըլլայ իր դիւանին ընտրութիւնը, յանձնին նախագահին, փոխ նախագահին, երկու քարտուղարներուն եւ երեք բանքերներուն:

Խորհրդարանի ընտրական ժողովը պիտի գումարուի ժամը 10:30ին, ժողովը պիտի նախագահէ երեսփոխան Քապալան Իսախանի, որուն կողքին պիտի ըլլան խորհրդարանի կրտսերագոյն անդամներ Էմիլ Էմիլ Լահուտ եւ Փիեռ Ամին ժըմալէ, որոնք կարճ ժամանակի մը համար պիտի վարեն երկու քարտուղարներուն պաշտօնը:

Այս բոլորին գուցահետ

խորհրդարանի նախագահի նստավայր Այն Թի-նէի մէջ ակտիվ էր աշխույժ երեքշաբթի, 17 Հոկտեմբերին գումարեց իր առաջին նիստը, որուն ընթացքին Նեպի Պրորի վերջնականապես խորհրդարանի նախագահ:

#### ԺՈՄՊԼԱԾ

Այն Թի-նէի մէջ ակտիվ էր աշխույժ երեքշաբթի, 17 Հոկտեմբերին գումարեց իր առաջին նիստը, որուն ընթացքին Նեպի Պրորի վերջնականապես խորհրդարանի նախագահ:

Այս արձագանքներուն առիթ մըն էր ժոմպլարի եւ Պրորի միջեւ առաջին հանդիպումը իրականացնելու երեսփոխանական ընտրութիւններէն ի վեր, մանաւանդ որ երկու վարչապետներուն միջեւ լայն խորհրդարանին առաջին գործը պիտի ըլլայ իր դիւանին ընտրութիւնը, յանձնին նախագահին, փոխ նախագահին, երկու քարտուղարներուն եւ երեք բանքերներուն:

Խորհրդարանի ընտրական ժողովը պիտի գումարուի ժամը 10:30ին, ժողովը պիտի նախագահէ երեսփոխան Քապալան Իսախանի, որուն կողքին պիտի ըլլան խորհրդարանի կրտսերագոյն անդամներ Էմիլ Էմիլ Լահուտ եւ Փիեռ Ամին ժըմալէ, որոնք կարճ ժամանակի մը համար պիտի վարեն երկու քարտուղարներուն պաշտօնը:

Այս բոլորին գուցահետ

մթնոլորտը կը բնորոշէ «հաշտութեան» նուազ եւ ստոյգի ճեղքումէն աւելին» բնորոշումով:

Աղբիւրները կը ճշեն, թէ հանդիպումին մասնաձեւը կ'ընդգրկէր իրենց քննարկութիւններուն մէջ անդրադարձնելու տեղական եւ շրջանային բազմաթիւ հարցերու, ինչպէս նաեւ միտքերու փոխանակում տեղի ունեցած է երկու պարտիաներու մակարդակով ապագայ համագործակցութեան շուրջ, զրկեալ շրջաններու բարգաւաճման վերաբերող հարցերու արծարծման ուղղութեամբ:

Նոյն աղբիւրներուն համաձայն, հանդիպումին ընթացքին Պրորի ժոմպլարէն եւ իր պլոնէն հանդիպումը իրականացնելու երեսփոխանական ընտրութիւններէն ի վեր, մանաւանդ որ երկու վարչապետներուն միջեւ լայն խորհրդարանին առաջին գործը պիտի ըլլայ իր դիւանին ընտրութիւնը, յանձնին նախագահին, փոխ նախագահին, երկու քարտուղարներուն եւ երեք բանքերներուն:

Պրորի եւ ժոմպլարի լարարեքտորներուն միջեւ ինչպէս նաեւ երկուսն ալ հանդիպումին լայն խորհրդարանին նախագահ Պրորի թեկնածութեան եւ ընտրութեան առնչութեամբ...

#### «ԴԻՄԱՂՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՐԳԱՒԱՃՈՒՄ»

Պրորի եւ ժոմպլարի հանդիպումէն առաջ Այն Թի-նէի մէջ գումարուեցաւ «Դիմաղորտ» պլոնի ժողովը՝ Պրորի նախագահութեամբ:

Ժողովին ընթացքին յայտարարուեցաւ խոր-

հրդարանի նախագահ Պրորի թեկնածութիւնը նոր խորհրդարանի նախագահութեան, ինչպէս նաեւ երեսփոխան Մամիր Ազար ընտրուեցաւ պլոնի փոխ նախագահ, երեսփոխան Պահիա Հարիրի՝ պլոնի ընդհանուր քարտուղար: Պլոնը նաեւ որոշեց նախկին վարչապետ Ռահիբ Հարիրին առաջադրել իրեն նախարարաց խորհրդին նախագահութեան թեկնածու:

#### ՎԱՆՈՒՊՈՒՄՆԵՐ

Պրորի Այն Թի-նէի մէջ իր գործունէութիւնը սկսաւ «Պասս-ի» երեսփոխանական պլոնի առաջնորդ Աւիւ Քանտոյի, Ապտէլ Ռահման Ապտէլ Ռահման եւ Քասեմ Հաշմի հետ հանդիպելով: Անոնք յայտնեցին իրենց գորակցութիւնը Պրորի երրորդ նստաշրջանի մը ընտրութեան համար:

Անկէ ետք տեղի ունեցաւ «Դիմաղորտ» եւ Բարգաւաճում» պլոնի առաջին ժողովը երեսփոխանական նախարարներ Ղազի Ջալալի, Անուար Խալիլի եւ Միշէլ Մուսայի եւ երեսփոխաններ Պահիա Հարիրի, Եսսիւ ժապի, Մոհամէտ Ապտէլ Համիտ Պայտուհի, Ալի Օսէյրահի, Ապտէլ Լաթիֆ Ջէյնի, Ալուա շըմայէտի, Ալի Պազգի, Ալի Սըլէյմ, Ալի Հասան Անթուան Սուրի, Մահմա՛մ Մամիր Ազարի ներկայութեամբ:

Ժողովէն ետք պլոնի ընդհանուր քարտուղար երեսփոխան Պահիա Հարիրի յայտարարեց, թէ պլոնը քննարկած է տեղական եւ շրջանային կացութիւնը՝ Լիբանանի եւ Սուրիոյ ակտիւմը իտրալիտան սպառնալիքներուն Պաղեստինի իրադրութիւններուն ընկերակցող իրերայաջորդ դէպքերուն լոյսին տակ: Պլոնը նաեւ քննարկած է հարաւր եւ սահմանային ազատագրութեան շրջանները հետաքրքրող հարցեր:

Այնուհետեւ Պրորի հանդիպում մը ունեցաւ խորհրդարանի երրորդ գոյն անդամ Քապալան Իսախանի հետ, որ իր գորակցութիւնը յայտնեց Պրորի երեսփոխանական ժողովի նախագահի թեկնածութեան:

Պրորի նաեւ հանդիպում ունեցաւ պաղեստինեան իշխանութիւններու հարցերու նախարար Ասատ Ապտէլ Ռահմանի հետ, որ շնորհակալութիւն յայտնեց Լիբանանի, պաղեստինացի ժողովուրդին ակտիւմը ցուցաբերած գորակցութեան կեցւածքին համար:

## ՎԱՍԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՓՈՒՆԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈ՛Վ ՊԱՏՈՒՐԱՆ ՍԸ ՈՉ ԲԱՐԵԿԵՑԻԿ ՌԻՍԱՆՈՂՆԵՐՈՒՆ ՎԱՍԱՐ

Լիբանանցիներուն ապրած տնտեսական տագնապին լոյսին տակ, համալրաբար նախկին փոխտնտեսութիւնները կը ներկայանան իրենց պատուհանները, որոնք կ'օգնեն ուսանողներուն, որպէսզի անոնք զիտական պաշար եւ ապահով ու արժանապայել ապագայ ձեռք բերեն:

Նկատի պէտք է առնել նաեւ, որ սեփական համալսարանները շատ քիչ են պայմաններ կը դնեն ծնողներուն վրայ՝ անոնց զաւակներուն ուսումը ջանքերով համար:

Տարեկան հարիւրաւոր ուսանողներ կը թափուին կը թափուին կը ստանան ընկերութեան այս շերտին օժանդակութիւն տրամադրող կազմակերպութիւններէ եւ միութիւններէ, որպէսզի շարունակեն իրենց համալսարանական կրթութիւնը Լիբանանի մէջ եւ դուրսը, ու հակառակ աւեր որ չկայ ուսումնասիրութիւն մը, որ յատկապէս փոխտնտեսութիւններուն կ'օգնէ իրենց կրթութեան, այսուհանդերձ կը ներկայանան սեփական ծնողները՝ անոնց անցնող լազմաթիւ իրանանցիներուն համար, որոնք հազիւ կրնան ապահովել կենցաղային հիմնական կարիքները:

Անկէ մեկնելով՝ կարելի է ըսել, որ այս փոխտնտեսութիւնները տեղ ունին ասոր մէջ: Այս տարի որքան է անոնց քանակը, անցեալ տարուան համեմատութեամբ:

«Անուար» այս նիւթին շուրջ զորոյ մը կազմակերպեց սեփական համալսարաններու նիւթական օժանդակութեան զբաւսեցնակներու պատասխանատուներուն հետ:

#### ◆ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՄԱՍԱՐԱՆ

Այս ծիրէն ներս Լիբանանեան Ամերիկեան համալսարանի (էլ. Այ. Նու.) նիւթական օժանդակութեան ծրագրի մտնողն է Մամիր Օպէյտ յայտնեց, որ հիմնական պայմանները, որոնք նկատի կ'առնուին փոխտնտեսութիւնը տրամադրելու ժամանակ, հետեւեալներն են՝ ընտանիքին նիւթական վիճակը, ուսանողին ակադեմական մակարդակն ու համալսարանին մէջ անոր վարքն ու բարքը:

մալսարանի փոխտնտեսութիւններէն օգտուողներուն անձը, այստեղ պէտք է նշենք, որ պիւտնէի թիւերը, անցեալ տարուան համեմատ ու թեմաբար, բարձրացան 19 առ հարիւրով, ինչ որ առիթ տուաւ օժանդակութիւններուն ծիրին ընդլայնման: Այս տարի թիւը բարձրացաւ մօտ տասը առ հարիւրով եւ այս փոխտնտեսութիւններուն աղբիւրը կու գայ համալսարանի ընդհանուր պիւտնէի 11 առ հարիւրէն:

#### ◆ՊԵՅՐՈՒԹԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՄԱՍԱՐԱՆ

Իր կարգին, Պէյրութի Ամերիկեան համալսարանէն ստեղծուած Մարի Գասպարեան ըսաւ, թէ համալսարանական փոխտնտեսութիւններուն նպատակը կարօտեալ են իրենց ուսումը Պէյրութի Ամերիկեան համալսարանին մէջ շարունակելու ատակ ուսանողներուն օգնութիւն տրամադրելն է:

Ասոր համար փոխտնտեսութիւնները առհասարակ կը արուին կարօտեալ, իրաժամ արձանազրած եւ յառաջողի ուսանողներուն:

Փոխտնտեսութիւնները տրամադրելու մէջ միջնորդութեան դերին մասին Գասպարեան ըսաւ, թէ այդպիսի միջնորդութիւններ նկատի չեն աւեր, բացի թէ փաստացի սեղեկութիւններ աւելցնեն փոխտնտեսութիւն խնդրող հասակին նիւթական վիճակին մասին:

Փոխտնտեսութիւններուն աղբիւրները կու գան համալսարանի շրջանէն:

նաւարտներէ, բարեկամներէ, կարգ մը դրամատուներէ, առեւտրական հաստատութիւններէ եւ համալսարանական հիմնադրամներէ, ինչպէս նաեւ՝ փոխտնտեսութիւն կատարող անհատներու ցանկէն, որ գոյուլիւն ունի համալսարանի 2000 - 2001 կրթական տարեշրջանի քաթալոյնի մէջ, էջ 373էն 378:

Վերջին վիճակագրութիւնները ցոյց կու տան, որ 1999 - 2000 տարեշրջանին օժանդակութիւններէ օգտուողներուն թիւը հասած է 1591 ուսանողի, այդ տարուան համար արձանագրուած է 2119 ուսանողներուն մէջէն, այսինքն համալսարանի ուսանողներուն 37,7 առ հարիւրը:

Իսկ Պէյրութի Արաբական համալսարանի ուսանողներու հարցերու անօրէն Մոհամէտ Համմուտ այս առնչութեամբ ըսաւ. «Փոխտնտեսութիւններուն աղբիւրը համալսարանին պիւտնէն է. գոյուլիւն ունի երկու տեսակի փոխտնտեսութիւն. աւալինը կը տրուի ուսանողին դասարանի մակարդակին հիմամբ եւ երկրորդ տարեշրջանին ան ապա կը կարգուի կրթական վճարումներէն:

Ներկորդը՝ փոխտնտեսութիւնը կարիքաւոր ուսանողներու օգնութեան համար միջոց մըն է: Համմուտ յատկապէս ցոյց տուաւ, որ միջնորդութիւնը որեւէ դեր չունի փոխտնտեսութիւնը տրամադրելու մէջ, այլ նկատի կ'առնուին երկուսն ալ իրենց ընկերային վիճակը՝ յատկապէս անոնց անհատական վիճակը:

Վերջին վիճակագրական տուեալները ցոյց կու տան ութ հարիւր օտանդակ ուսանողներու գոյուլիւնը 2000 թուականին համար:

#### ՍՈՒՆԱ ՂԵՅՍ «Անուար»



**GAS G. Ayanian & Sons**  
Dora, Tel: 255222/3/4/5/6 Cellular: (03) 627728/9  
Gemayzeh, Tel: 447000 - 445429, Fax: (01) 265187 - 582357

ԼԱՊԻԼ ԸԱՅԱՍ  
Քաղաքացիական  
«Սաֆիր»-էն

**ԹՈՐՈՍ ԴՈՍԼԻՆ ԿԵՐՊ. ԱԿՎԵՄԻԱ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ Լ. ՇԱՆԹ ԿԵԴՐՈՆ**  
01-265899 եւ 01-249378

**2000—2001**

- ԱԿՎԵՄԻԱԿԱՆ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՈՅ Օր.- Երեքշաբթի, Չորեքշաբթի, Հինգշաբթի ժամ.- 4:00-6:00
- Վերամուտ. - 17 Հոկտեմբեր 2000
- ՊԱՏԱՆԵՐՈՒ ԶՍՏՈՒԿ ԴԱՍԸՆԹԱՅՔ Օր.- Ուրբաթ ժամ.- 4:00-6:00
- Վերամուտ. - 20 Հոկտեմբեր 2000

**ՄԱՆԿԱԳԱՏԱՆԵԱՆ ԶԱԲԱՅՈՐԵԱՅ ԴԱՍԸՆԹԱՅՔ**

Օր.- Շաբաթ ժամեր	Տարիք
10:00-12:00	4էն 7
12:00-2:00	7էն 10
2:00-4:00	10էն 13

**ՎԵՐԱՍՈՒՄ 21 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2000**  
Յատուկ գին առաջին 25 արձանագրուող աշակերտներուն:

Թ. ԴՈՍԼԻՆ ԿԵՐՊ. ԱԿՎԵՄԻԱ

# Կնոջական

ՍՆՆԴԱԳԻՏԱԿԱՆ - ԱՌՈՂՋԱՊԱՐԱԿԱՆ

## ԼԱԻ ՄՆԱՆԻԼ ԲՈԼՈՐ ՏԱՐԻՔՆԵՐՈՒՆ

20 տարեկան ըլլանք թէ վաթսուեն, մեր մարմինը նոյն կենսունակութիւնն ու պահանջները չունի:

Մենդագէտներ մեզի կը փոխանցեն իւրաքանչիւր տարիքի համապատասխան առողջ սննդառութեան պահանջները երկար եւ առողջ ապրելու համար:

### 30 ՏԱՐԵԿԱՆԻՆ

Կեանքի ամենէն ընդուն, գործունեայ տարիներն են: Այս տարիքին է, որ կիրները առաւելաբար կը յղանան եւ, բնականաբար, այլապէս ու հաւասարակչուած սնունդի պէտք ունին:

### Ի՞նչ բաներու պէտք ունի 45 տարիքը թեւակոխած կինը

- Կիրի, օրական միջին հաշուով՝ 1200 միլիկրամ - Տէ. կենսանիւթի, որ կը նպաստէ կիրին հաստատման մեր ոսկորներուն վրայ:

- Սէ. կենսանիւթի եւ պլազմա-քարթէ. կը, զոր կը

### 20 ՏԱՐԵԿԱՆԻՆ

Այս տարիքին յաճախ կ'անտեսենք սնական ճաշերն ու ընթացքները, որոնք հարուստ են բանջարեղէններով, եւ նախապատուութիւնը կու տանք ֆար-ֆուտերուն, որոնք աւելի արագ ու գործնական կը թուին... Արդիւնք՝ կը զիրանք, սննդականութիւնը կը հետեւինք, կ'ընկճուինք, կը նհարանք, կրկին կը զիրանք...



### Ինչի՞ պէտք ունի 30 թեւակոխած կինը

- Դանդաղ շաքարներու (բրինձ, դրամա...):

- Երկաթի (միս, ոսպ...):

- Կիրի:

զանքն պտուղներուն եւ առաւելաբար ստեպլիներն, սեխին, լոլիկին, խոշոր դդուկին մէջ:

- Մակնեգիւտի, որ սրիւսի դէմ կը պայքարի:

- Ջուրի:



### Ի՞նչ բաներ անհրաժեշտ են 20 տարեկանին

- Կիրը, զոր կը զաննեք կաթնեղէններուն, կազամրին, նարինջին եւ հանքային ջուրերուն մէջ:

- Բնասպիտը, զոր կը զաննեք միսին, հակիթիին, ձուկին եւ հաւուն մէջ:

- Մակնեգիւտը, զոր կը զաննեք նուշին, ընկուզին եւ կաղիւնի մէջ:

- Ալյազան կենսանիւթերը, զոր կը զաննեք պտուղներուն եւ բանջարեղէններուն մէջ:

### Ի՞նչ բաներ վնասակար են 30 տարեկանին

- Արագ շաքարները (քաղցրեղէն, կարկանդակ...):

- Ծխախոտը:

- Ալքոլը:

### Ի՞նչ բաներ վնասակար են 45ը թեւակոխած կիներուն

- Նիւտրացնող սննդականութիւնը

- Ճարպը

- Ծխախոտը, սուրճը, համեմունքը

- Ալքոլը

### 45 ՏԱՐԵԿԱՆԻՆ

Մենդագի նախորեակն է, մարմինը նոր փոփո-

### Ի՞նչ բաներ վնասակար են 20 տարեկանին

- Քաղցր գովազուցիչները:

- Սուրճը, աղը, տապկոցը:

- Ֆար-ֆուտերը (եւ մարկիւր, փիցա...):

- Դեղահատերը (ինքնադարմանումի իմաստով):

- Խիստ եւ չսերտուած սննդականութիւնը:

### Ինչի՞ պէտք ունի 60 թեւակոխած կինը

խուսապիտ կ'ենթարկուի, պէտք է ջանանք հանդարտօրէն դիմազար-

### Ի՞նչ բաներ անհրաժեշտ են 60 տարեկանին

- Ալյազան սնունդը՝ անխախտ պահելու համար



## Ս. ՊԱՏԱՐԱԳ ԴՊՐԵՎԱՆՔԻ ՄԱՏՈՒՈՒՆ ՄԷՋ

Դպրեվանքի տեսչութիւնը ուրախութիւնը ունի յայտարարելու, թէ Ս. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. վեհափառի բարեհաճ տնօրհնութեամբ, Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակումի 1700ամեակին առիթով, Սուրբ եւ Անմահ պատարագ պիտի մատուցուի Պրքֆայայի Ս. Աստուածածնայ մատուռին մէջ, դպրեվանքի ուսանողներուն երգեցողութեամբ, ամեն Ուրբաք երեկոյեան ժամը 7:30ին:

Ձերմտքն կը հրաւիրենք եւ կը քաջալերենք մեր ժողովուրդի զաւակները, յատկապէս շրջանի հաւատացեալները, մասնակցելու Սուրբ պատարագին եւ հաղորդուելու մեր հայրերու հաւատքով:

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ԴՊՐԵՎԱՆՔԻ

## «ԱՁԳԱԿ»Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին -Ազգայի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժնամասին հասցնեն հրատարակման քուակազմէն առնուազմ օր մը առաջ, ՄԻՆՉԵՒ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 5:

## ՄԵՐ ԶԱՒԱԿՆԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ

# ՈՒՂԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆԸ

Յաճախ երբ ուսուցիչը գրաւոր աշխատանք մը կու տայ աշակերտներուն, անոնք առաւելաբար կը կեդրոնանան բովանդակութեան վրայ եւ կ'անտեսեն ուղղագրութեան բաժինը:

Նոյնն է պարագան մեր գաւակներուն: Յաճախ կ'ընդգծենք, երբ կը տեսնենք անոնց ուղղագրական անընդունելի սխալները: Արդեօք իբրեւ ծնողք կրնա՞ք օգնել անոնց... Անշուշտ՝ այո՛:

Սակայն ուղղագրութեան սրբագրութիւնն ու բարելաւումը ժամանակի եւ յարատեւութեան կը կարօտին, հետեւաբար չյուսահատինք եւ փորձենք զանազան ձեւերով օգնել անոնց:



քեր, ամսաթերթեր եւ թերթեր գտնուի եւ քաջալերենք, որ օրական առնուազմ քառորդ ժամ կարդան:

### ◆ ԲԱԶԱԼԵՐԵԼ, ՈՐՊԵՍՁԻ ԳՐԵՆ

Մեր գաւակներէն խաղի ձեւով պահանջենք, որ մեր գնումներուն ցանկը գրեն կամ հետաւոր ազգակցին մը բացիկ մը դրկեն եւ կամ, ինչու չէ, պատիկ ուսանաւոր մը գրեն:

Մեր առաջին գործը թող ըլլայ գնահատել գրութեան բովանդակութիւնը, յետոյ միայն սրբագրենք ուղղագրական սխալները՝ ի հարկին կանոնը յիշեցնելով:

### ◆ ԱՅԼ ՄԻՋՈՅՆԵՐ

- Մեր գաւակին բառարան գտնելու միջոցով անոնք գրաւորապէս կարող են ստուգել իրենց գրած բառերը:

- Պարբերաբար ստուգել, որ ան իր ուղղագրական կանոնները կը յիշէ՞ եւ կրնա՞յ գործադրել զանոնք:

- Օրական մէկ բառի ուղղագրութիւնը տրվեցնել՝ բառը խոշոր տառերով ստանարանին վրայ գետեղելով: Ծարաքալեքին ստուգել տրված բառերը:

- Պարբերաբար կարճ ուղղագրութիւններ ընել եւ ապա միասին սրբագրել՝ տեսարար օրէնքը յիշեցնելով:

### ◆ ԲԱԶԱԼԵՐԵԼ, ՈՐՊԵՍՁԻ ԿԱՐԿԱՆ

Երբ աչքերը կեդրոնանան բառի մը վրայ, ուղեղը - կը լուսանկարէ՝ զայն: Այդ լուսանկարը կը վերակենդանանայ ամէն անգամ, որ երեխան հանդիպի նոյն այդ բառին: Ուրեմն դպրոցականները պէտք է շատ եւ յաճախ կարդան, որպէսզի անոնց ուղեղը տեսարարն անխափան ճիշդ բառերը, իսկ աչքերը տեսարար տեսնեն ճիշդ նկարները:

Հետեւաբար, իբրեւ ծնողք, մեր գաւակներուն գիր-

## ԳԵՂԵՑԿԱԳԻՏԱԿԱՆ

# ԳԵՂԵՑԿԻ ԲԵՐՆԻ ՄԸ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Շատեր գեղեցկագիտական միջոցներու կը դիմեն, ուրիշներ շարժի՝ գեղեցիկ բերան մը ունենալու համար:

Կարելի է մեծածախս եւ երբեմն ալ ձախող գեղեցկագիտական գործողութիւններէն հրաժարիլ եւ դիմել աստիճանաբար գեղեցկութեան: Գրեթէ նոյն արդիւնքին հասնելու համար:

Ահաւաստի 3 տարբեր հանգրուաններէ անցնող եւ զիրար ամբողջացնող մարձուամներ եւ խնամքներ, որոնք պիտի գեղեցկացնեն ձեր բերանը անոր ծաւալ եւ համայն տարով:

### Բ. ՀԱՆԳՐՈՒՄ

Սովորական սերով մը ծեփեցէք ձեր շրթները, ապա զոյգ ցուցամատներով եւ բուժամատներով բռնեցէք ձեր վերին շրթները եւ քիչ-քիչ ճնշեցէք անոր երկայնքին: Թեթեւ տաքութիւն մը պիտի զգաք: Երբ ծուր մը կրկնեցէք օ՛ն 6 անգամ, ապա նոյնը ըրէք վարի շրթներէն հետ:

Այսպէսով շրթները արեւան շրջագայութիւնը պիտի աշխտեմանայ եւ անոնք ծաւալ պիտի ստանան:

### Գ. ՀԱՆԳՐՈՒՄ

Ձեր բերանը շարժելու կը յաջողի այն պարագային, երբ ձեր շրթները արեւան մորթը սահուն եւ ողորկ է... Նախ զանոնք շփեցէք շրթի մէջ թափախուած բամպակով մը՝ մեծածախս շրթներուն շրջած մորթերը մաքրելու:

### Ա. ՀԱՆԳՐՈՒՄ

Հայելին դիմաց ձեր ցուցամատներով ճնշեցէք ձեր բերանի երկու ծայրամասերուն վրայ: Ապա մատերը իրարու մօտեցնելու ճիգով բերանին «օ» տառին ձեւը



տուէք. ապա մատները կրկին հեռացուցէք այս անգամ բերանի ծայրի ձեւ տալով: Այս շարժումները կրկնեցէք օ՛ն 6 անգամ:

լու նպատակով: Ապա դէմքի լուսնու կոմանդով մը կրկին շփեցէք բոլորովին ողորկ դարձնելու համար: Վերջապէս, սնուցանող սերով մը ծեփեցէք զանոնք եւ ժամ մը ետք միայն անցէք շարժի արարողութեան:

## ԽՈՂԱԳԻՐ


# ՄԱՐՈՒԿԻ ԽԻՒՍ

### Պատրաստութեան համար անհրաժեշտ են-

- 2 սմրուկ
- 2 լոլիկ
- 4 կէս կիտրոն
- Պղտիկ սոսի մը
- 4 ցօղուն ագառաքեղ
- Երկու ցօղուն թարմ բզպարա
- Թէյի գաւաթ մը մածուն
- Ապուրի 2 դգալ ձիթախաղ
- Աղ, սեւ պղպեղ

### Պատրաստութեան կերպը-

Սմրուկները խորովել, ապա կեղուել եւ ճզմուած միջուկը ամանի մը մէջ փոխադրել: Լոլիկները շատ մանր շարդել: Սոսի մանրել եւ ձիթախաղին մէջ 5 վայրկեան եփել, ապա աւելցնել լոլիկը, աղն ու պղպեղը, խառնել եւ 2 վայրկեան եւս եփել: Խառնուրդին աւելցնել սմրուկը եւ դարձեալ եփել 3 վայրկեան: Կրակին վրայէն հանել եւ աւելցնել մանրուած ագառաքեղն ու բզպարան:




Խառնուրդը փոխադրել խորունկ ամանի մը մէջ եւ ձգել, որ պաղի: Վերջապէս, աւելցնել մածունն ու կէս կիտրոնի հիւթը: Խառնել եւ 2 ժամ սառնարանը պահել: Հրամայեցէ պաղ ձկնեղէնի մը կամ մսեղէնի մը կողքին: Բարձր ախորժակ:

### Պատրաստեց՝ ՇՈՒՇԻԿ ՄԱԻՍԱԳԱԼԵԱՆ



# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Կ



ԱՄՍԻԱ - 2000

## ԼԻԲԱՆԱՆ ԴՈՒՐՍ ՄԵԱՅ ՄՐՅԱՇԱՐՔԵՆ

Ֆուտբոլի իր պատմության մեջ առաջին անգամ ըլլալով Ասիոյ ֆուտբոլի ֆիդեանու-թեան իր մասնակցու-թիւնը բերած (իբրեւ հիւրընկալ երկիր) Լիբանանի ֆուտբոլի ազգային խումբը, երէկ Մարպական Աւանի դաշտին վրայ բազմաժամկէտ իր համա-կիրներուն ներկայու-թեան 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրելէ ետք Թայլանտի հետ, դուրս մնաց մրցաշարքէն:

Քառորդ աւարտա-կան հանգրուանին հասնելու յոյս մը ունեցող (իբրեւ յաւազոյն երրորդը) Լիբանան 45 հազար համակիրնե-րու ներկայութեան չկրցաւ իրմէ սպաս-ւածը տալ եւ մրցաշար-քը աւարտեց առանց յաղթանակի, կրելով պարտութիւն մը եւ արձանագրելով երկու հաւասարութիւն:

Ա. կիսախաղին, եր-կու կազմերն ալ յիշա-տակելի գրեթէ ոչինչ յաջողեցան ընել: 57րդ վայրկեանին Սաբե-սան Փիթուրաթանայի նշանակած կոլէն ետք է, որ Լիբանան քիչ մը «արթնցաւ» եւ սկսաւ կազմակերպել յարձա-կումներ, որոնք սա-կայն չարդիւնաւոր-ւեցան մինչեւ 82րդ վայրկեանը, երբ Լուիս Ֆեռնանտէս նշանա-կեց Լիբանանի հաւա-սարութեան կողմ:

Առաջին մրցումին նման (Իրանի դէմ), յա-ռաջապահ վարդան Վապարեան դարձաւ զաշտ ներկայացաւ իբ-րեւ պահեստի մար-պիկ, սակայն այս ան-գամ մարպիչ Եոսիփ Սքոպլար քիչ մը աւելի «բարեացալիս» գտնուած էր եւ վայն զաշտ ներկայացու-ցած՝ 53րդ վայրկեա-նին (առաջին մրցու-մին՝ 81րդ վայրկեա-նին): Իրաքի դէմ ան զաշտ չէր ներկայա-ցած:

Այժմ, հարցական է,

թէ արդեօք ի՞նչ պատ-կեր պիտի ներկայաց-նեն դաշտերը, յառա-ջիկայ մրցումներուն ընթացքին...

Միւս կողմէ, նոյն ժամուն տեղի կ'ունե-նար Իրան - Իրաք ճա-կատումը: Իրաք, հա-կառակ անոր, որ 1-0 արդիւնքով պարտու-

թիւն մը կրեց, սակայն ապահովեց քառորդ աւարտականի իր տոմարը: Այի Տայէ նշա-նակեց մրցումին «որը» կողմը (77րդ) եւ անոր կազմը գրաւեց խմբա-կին պարագլուխի դիր-կատումը: Իրաք, առա-ջը, առանց պարտու-թիւն կրելու:

Ստորեւ՝ Ա. խմբակին վերջնական դասաւորումը.


	ՅԱԳԹ.	ՀԱԻ.	ՊԱՐՏ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԵՏ
1.- Իրան	2	1	0	6	1	7
2.- Իրաք	1	1	1	4	3	4
3.- Թայլանտ	0	2	1	2	4	2
4.- Լիբանան	0	2	1	2	7	2

Բ. խմբակէն ներս այսօր տեղի կ'ունենան երկու մրցումներ, որոնցմէ ետք կը յատկանայ Բ. խմբակին պատկերը.

Չինաստան - Քուէյթ  
Հարաւային Բորնեո - Ինտոնեզիա

ՃԱՍՐԱԿ

## ՔՐԱՄՆԻՔ - ԳԱՍՊԱՐՈՎ՝ 3.5 - 2.5



Լոնտոնի մէջ տեղի ունեցող ճատրակի ռուս երկու հսկաներուն՝ Վլատիմիր Բրամնիքի եւ Կերի Գասպարովի միջեւ 6րդ հանդիպումը եւս նախորդ երկուքին նման վերջ գտաւ հաւասարութեամբ: Հետեւաբար անոնց միջեւ մէկ կէտի տարբերութիւնը մնաց նոյնը: Այժմ արդիւնքն է՝ 3.5 - 2.5, ի նպաստ Բրամնիքի:

Յարդ կատարուած վեց հանդիպումներուն ընթացքին (ընդամենը՝ 16 հանդիպում), Բրամնիք արձանագրած է մէկ յաղթանակ, մինչ մնացեալ բոլոր հանդիպումները վերջ գտած են հաւասարութեամբ:

Եօթը ժամ տեւած այս 6րդ հանդիպումին, Բրամնիք կը խաղար ձեռնակ քարերով:

Նշենք, թէ վերջնական յաղթանակ տանողը (ան որ առաջին անգամ 8.5 կէտ կ'ունենայ) պի-տի ստանայ 2 միլիոն տոլար:

## ՖՈԿՅ ՊԱՏՐԱՍՏ Է ԱՆԳԼԻՈՅ ԱՉԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ ՄԱՐԶԵԼՈՒ...

Գերմանիոյ ֆուտ-բոլի ազգային խումբին նախկին մարպիչը՝ Պերթի Ֆոկս երէկ յայտնեց, թէ կը մտադ-րէ ընդունիլ Անգլիոյ ֆուտբոլի ազգային խումբին մարպիչի պաշտօնը, անշուշտ եթէ Անգլիոյ ֆուտբոլի ֆետերասիոնը այդ մե-կը իրեն առաջարկէ, կը յայտնէ բրիտանա-կան «Տէյլի Միթր» օրաթերթը երէկուան իր թիւով:

«Տետերասիոնին կողմէ եթէ այդ մէկը ինձի առաջարկուի, յիշօրէն պիտի մտա-ծեմ այդ ուղղութեամբ, որովհետեւ նման պաշտօն ստանալու մեծ պատիւ մըն է: Սա-կայն այդ մէկը ֆետե-րասիոնն է, որ պիտի որոշէ եւ ոչ թէ ես: Անգլիոյ մարպիչի պաշտօնը ստանալու մեծագոյն պաշտօննե-րէն մէկն է ֆուտբոլի աշխարհին մէջ, մա-նաւանդ, որ ներկայիս

շատ մը մարպիչներու կողմէ այդ ուղղու-թեամբ մեծ պայքար կը մղուի», կը գրէ օրա-թերթը, մէջբերելով Ֆոկսի խօսքերը:

Ֆոկսի Անգլիոյ մարպիչ նշանակուիլը վստահաբար, որ հաշտ աչքով պիտի չզրկուի անգլիացի համակիրներուն կող-մէ, նկատի ունենալով, որ գերմանացիք կը նկատուին Անգլիոյ «ոխերիմ» թշնամին՝ ֆուտբոլի պատմու-թեան մէջ:

Այս մէկը անգլիացի համակիրներուն կար-ծիքն է անշուշտ. բայց արդեօք ի՞նչ պիտի ըլ-լայ Անգլիոյ ֆետե-րասիոնին ճշդելիք դիրքը այդ ուղղու-թեամբ: Անկա պիտի ուզէ «օտար» մը նշա-նակել ազգային խումբին մարպիչ, այդ ալ... գերմանացի:

Բայ բրիտանական գրաւի գրասենեակնե-րուն, հրաժարած մար-

պիչ Բեւին Բիկընի յա-ջորդը կրնայ ըլլալ նա-եւ Անգլիոյ ազգային խումբին նախկին մարպիչ Թերի վենը-պըլլ:

Տետերասիոնին կողմէ սակայն, ցարդ ոչ մէկ յայտարարու-թիւն կը կատարուի այդ ուղղութեամբ. նոյնիսկ անորոշ է, թէ յա-ռաջիկայ ամիս, Իտա-լիոյ դէմ տեղի ունե-նալիք ֆուտբոլի բա-րեկամական մրցումին ընթացքին ո՞վ պիտի ըլլայ խումբին մարպի-չը:

Բրիտանական «Տը Մէյլ» օրաթերթին հա-մաձայն, յառաջիկայ նոյեմբեր 15ին Իտա-լիոյ դէմ տեղի ունեա-լիք մրցումին մարպիչը պիտի ըլլայ Նիքէսըի մարպիչ Պոպի Ռոպ-արն, որ նախապէս իր կարգին եղած է Անգ-լիոյ մարպիչը: Այդ մէկը սակայն անոր պիտի առաջարկուի միայն մէկ մրցումի համար:

## «ՉԷՄՓԻԸՆՉ ԼԻԿ»

# Ա. ՍԷ. ՄԻԼԱՆ - ՊԱՐՍԵԼՈՆԱ 3-3, ՊԱՅԷՐՆ ՄԻԻՆԻԽ - ՓԱՐԻԶ ՍԷՆ ԺԵՐՄԷՆ 2-0

«ՉԷմփիընչ Լիկ»ի Ա. հանգրուանի դարձի մրցումներուն, երէկ գիշեր տեղի ունեցան ութ ճակատումներ՝ Ե., Չ., Է. եւ Ը. խմբակներէն ներս: Այսպիսով, մրցաշարքին մասնակցող 32 խումբերն ալ կատարած եղան չորսական մրցում եւ անոնք տակաւին երկուքական մրցում ունին կատարելիք, որմէ ետք կը յատ-կանայ, թէ ո՞ր 16 խումբերը պիտի ապահովեն Բ. հանգրուանի իրենց տոմարը:

Երեքշաբթի օր տեղի ունեցած մրցումներէն ետք, արդէն իսկ յստակացած էր երեք կազմե-րու անունները, որոնք առանց սպասելու իրենց կատարելիք վերջին երկու մրցումներուն, կտրած էին Բ. հանգրուանի իրենց տոմարը: Այդ երեք կազմերն էին. Արսենալ, Ռեյալ Մատ-րիտ եւ Վալենսիա:

Երէկուան մրցումներուն, կարգ մը խումբեր յաջողեցան երթի իրենց կրած պարտութիւննե-րուն վրէժը լուծել իրենց մրցակիցներէն: Այդ խումբերը եղան. Պայէրն Միւնիխ, Հելսինկ-պորկ, Անտրլիխթ եւ Մանչեսթըր Եունայթըտ, որոնք յաջորդաբար պարտութեան մատնեցին Փարիզ Սէն Ժերմէնը, Ռոպէնպորկը, Տինամօ Քիւր եւ Փ. Ս. Վ. Այնտիվընը:

Ստորեւ՝ մրցումներուն մասին տեղեկութիւն-ներ.

(Ե. խմբակ)  
Ե. խմբակին պատկերը մնաց նոյնը եւ դասա-ւորման մէջ որեւէ փոփոխութիւն տեղի չունե-ցաւ, որովհետեւ երկու մրցումներն ալ աւարտե-ցան հաւասարութեամբ եւ չորս խումբերէն որե-ւէ մէկը չկրցաւ ապահովել Բ. հանգրուանի իր տոմարը:

Փանաթինայքոս - Համպուրկ մրցումը վերջ գտաւ 0-0 արդիւնքով, իսկ Տեփոթիօ Քորու-նա - Եուվենթուս մրցումը՝ 1-1 արդիւնքով: Եու-վենթուսի կողմը նշանակեց Ֆիլիփօ Ինցակի (10րդ), իսկ սպանական կազմին հաւասարու-թեան կողմ՝ Վիքթոր (12րդ):

(Չ. խմբակ)  
Ե. խմբակին նման նոյն պատկերով մնաց Չ. խմբակին դասաւորումն ալ, ուր պարագլուխի դիրքը գրաւող Պայէրն Միւնիխ ամրապնդեց իր տեղը, երեք կէտի առաւելութիւն ունենալով իր անմիջական մրցակիցներուն՝ Ռոպէնպորկի եւ Փարիզ Սէն Ժերմէնի վրայ, որոնք ունին ճական կէտ:

Գերմանական կազմը երթին կրած պարտու-թեան վրէժը լուծեց Փարիզ Սէն Ժերմէնէն. նոյ-նը բրաւ նաեւ Հելսինկպորկ, նոյն արդիւնքով (2-0) պարտութեան մատնելէ ետք Ռոպէնպոր-կը: Հելսինկպորկ կ'արձանագրէր մրցաշարքի իր առաջին յաղթանակը:

Պայէրն Միւնիխի երկու անպատասխան կո-լերը նշանակեցին Հասսան Սալիհամիժի (4րդ) եւ Փաուլօ Սերժիօ (89րդ):

(Է. խմբակ)

Ամբողջութեամբ տարբեր էր պարագան սա-կայն Է. խմբակին, ուր դասաւորման պատկերը ամբողջութեամբ շրջուեցաւ: Պարագլուխի դիր-քը գրաւեց Մանչեսթըր Եունայթըտ (նախապէս՝ 3րդ), երկրորդ դիրքը՝ Անտրլիխթ (նախապէս՝ 4րդ), երրորդ դիրքը՝ Փ. Ս. Վ. Այնտիվըն 3րդ (նախապէս՝ առաջին) եւ վերջապէս չորրորդ դիրքը՝ Տինամօ Քիւր (նախապէս՝ 2րդ):

Մանչեսթըր Եունայթըտ, երթի իր կրած պար-տութեան նման (3-1), նոյն արդիւնքը արձա-նագրեց, պարտութեան մատնելով իր հիւրը՝ Փ. Ս. Վ. Այնտիվընը, շնորհիւ Թեոփ Շերինկհեմի (8րդ), Փոլ Սքոպլի (82րդ) եւ Տուայթ Եորթի (87րդ) նշանակած կոլերուն, Փ. Ս. Վ. ի կողմը նշանակեց Մարք Վան Պոնէլ (75րդ):

(Ը. խմբակ)  
Ը. խմբակին ընդհանուր դասաւորումը ոչ մէկ փոփոխութիւն կրեց, որովհետեւ տեղի ունեցած երկու մրցումներն ալ վերջ գտան հաւասարու-թեամբ: Պեշխթաշ - Լիծ մրցումը վերջ գտաւ 0-0 արդիւնքով, իսկ Ա. Սէ. Միլան - Պարսելոնա կոլերով հարուստ մրցումը՝ 3-3 արդիւնքով:

Սպանական կազմին աստղը եղաւ պրապի-ցի Ռիվալտո, որ հէթըրիք մը իրագործեց, յաջոր-դաբար 19րդ, 43րդ եւ 68րդ վայրկեաններուն: Իտալական կազմին կոլերը նշանակեցին Տե-միթթիօ Ալպերթինի (25րդ եւ 39րդ) եւ Խոսէ Մա-րի (45րդ):

Երէկուան մրցումներուն թիւով ամենէն աւե-լի շատ համակիրները ներկայ գտնուեցան Ա. Սէ. Միլան - Պարսելոնա մրցումին (79 հազար), իսկ երկրորդը՝ Մանչեսթըր Եունայթըտ - Փ. Ս. Վ. Այնտիվըն մրցումին (66 հազար):

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնք-ները.

(Ե. խմբակ)  
Տեփոթիօ Քորունա - Եուվենթուս 1-1  
Փանաթինայքոս - Համպուրկ 0-0

(Չ. խմբակ)  
Պայէրն Միւնիխ - Փարիզ Սէն Ժերմէն 2-0  
Հելսինկպորկ - Ռոպէնպորկ 2-0

(Է. խմբակ)  
Անտրլիխթ - Տինամօ Քիւր 4-2  
Մանչեսթըր Եունայթըտ - Փ. Ս. Վ. Այնտիվըն 3-1

(Ը. խմբակ)  
Պեշխթաշ - Լիծ 0-0  
Ա. Սէ. Միլան - Պարսելոնա 3-3

Ա. հանգրուանի դարձի մրցումներէն ետք, այժմ ութ խմբակներուն պատկերը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը (իւրաքանչիւր խմբակի առաջին երկու գիցքերը գրաւող կազմերը կ'անցնին Բ. հանգրուան: Անոնք ապահովին եր-կուքական մրցում ունին կատարելիք):

(Ա. խմբակ)

	ԿԵՏ
1.- Ռեյալ Մատրիտ	10 (11-7)
2.- Սպարտակ Մոսկուա	9 (8-2)
3.- Պայէր Լեւեքըուպըն	3 (8-12)
4.- Սփորթինկ Լիպսոն	1 (5-11)

(Բ. խմբակ)

1.- Արսենալ	10 (7-3)
2.- Լացիօ Ռոմա	7 (7-3)
3.- Շախթար Տոնէցք	3 (6-10)
4.- Սփարթա Փրակա	3 (4-8)

(Գ. խմբակ)

1.- Վալենսիա	12 (6-2)
2.- Օլիմպիաքոս	6 (5-4)
3.- Լիոն	3 (5-6)
4.- Հիրենվիլ	3 (2-6)

(Դ. խմբակ)

1.- Կալաթասարայ	7 (6-7)
2.- Ռեյնճըրք	7 (8-3)
3.- Շթուրմ Կրաց	6 (5-10)
4.- Մոնաքօ	3 (7-6)

(Ե. խմբակ)

1.- Եուվենթուս	6 (7-6)
2.- Տեփոթիօ Քորունա	6 (4-3)
3.- Փանաթինայքոս	5 (3-3)
4.- Համպուրկ	2 (5-7)

(Չ. խմբակ)

1.- Պայէրն Միւնիխ	9 (8-3)
2.- Ռոպէնպորկ	6 (10-7)
3.- Փարիզ Սէն Ժերմէն	6 (6-6)
4.- Հելսինկպորկ	3 (5-13)

(Է. խմբակ)

1.- Մանչեսթըր Եունայթըտ	7 (9-5)
2.- Անտրլիխթ	6 (6-11)
3.- Փ. Ս. Վ. Այնտիվըն	6 (6-6)
4.- Տինամօ Քիւր	4 (7-6)

(Ը. խմբակ)

1.- Լիծ	7 (7-4)
2.- Ա. Սէ. Միլան	7 (9-5)
3.- Պեշխթաշ	4 (4-10)
4.- Պարսելոնա	4 (7-8)

Ստորեւ՝ Հոկտեմբեր 24ին եւ 25ին տեղի ու-նենալիք մրցումներուն յայտագիրը.

ԵՐԵՎԱՆԻ 24 ՀՈԿՏԵՄԲԵՐ

(Ե. խմբակ)  
Եուվենթուս - Համպուրկ  
Տեփոթիօ Քորունա - Փանաթինայքոս

(Չ. խմբակ)  
Փարիզ Սէն Ժերմէն - Ռոպէնպորկ  
Պայէրն Միւնիխ - Հելսինկպորկ

(Է. խմբակ)  
Տինամօ Քիւր - Փ. Ս. Վ. Այնտիվըն  
Անտրլիխթ - Մանչեսթըր Եունայթըտ

(Ը. խմբակ)  
Լիծ - Պարսելոնա  
Պեշխթաշ - Ա. Սէ. Միլան

2ՈՐԵՔՏԱԲԹԻ, 25 ՀՈԿՏԵՄԲԵՐ  
(Ա. խմբակ)  
Պայէր Լեւեքըուպըն - Սպարտակ Մոսկուա  
Ռեյալ Մատրիտ - Սփորթինկ Լիպսոն

(Բ. խմբակ)  
Արսենալ - Սփարթա Փրակա  
Լացիօ Ռոմա - Շախթար Տոնէցք

(Գ. խմբակ)  
Օլիմպիաքոս - Վալենսիա  
Հիրենվիլ - Լիոն

(Դ. խմբակ)  
Մոնաքօ - Կալաթասարայ  
Շթուրմ Կրաց - Ռեյնճըրք

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒՊԱՅՔԱՐ

# ԿՈՐ - ՊՈՒՇ ՄՐՅԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԸՆՏՂԵՏԵ ԿԸ ՄՐԻ

## ՌՈՒՍԻԱ ԿԱՆԹԱՄԻՐՈՎԸ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ ԿՐՈՉՆԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՄՈՍԿՈՒԱ, 18 (ՌՈՅԹԸՐԶ)։- Ռուսիա Չորեքշաբթի օր դրամ իրացնելու լանցանքով ամբաստանուած Պիսյան Կանթամիրովը Չեչենիոյ աւերուած մայրաքաղաքին քաղաքապետ նշանակած է, յայտնելով, որ վերջ տուած է Մոսկուայի ի նպաստ կողմնորոշուած չեչեն ամենէն ակաւաւոր երկու ղեկավարներուն միջեւ ծայր տուած բանավէճին:

Ռուսիա Կանթամիրովը առաջին անգամ Կրոպչիի քաղաքապետ նշանակած է 1994էն 1996ի Չեչենիոյ պատերազմին ընթացքին, իր ուժերուն կողմէ քաղաքին գրաւումէն ետք:

Ան բանտարկուած էր քաղաքի վերակառուցման յատկացուած միլիոնաւոր տոյարներ իրացուցած ըլլալու լանցանքով:

Աւելի ուշ, երբ ռուսական ուժերը Չեչենիա վերադարձած էին, Կանթամիրովի ներում շնորհուած է եւ ան բանտէն ազատ արձակուած է՝ գլխաւորելու համար ռուսամէտ Կիւնայներու խմբակ մը:

Ռուսական պետական պատկերասփիռի «Ար. Թի. Ար.» կայանը ցոյց տուած է հարաւային Ռուսիոյ մէջ Կրեմլինի պատուիրակ Վիքթոր Քալանցեւը, որ մամուլը ասուլիսի մը ընթացքին կը յայտարարէ Կանթամիրովի նշանակումը: Անոր կողքին գտնուած է Մոսկուայի կողմէ նշանակուած Չեչենիոյ չեչեն կառավարիչը՝ Ահմէտ Զատիրով:

Քատիրովը եւ Կանթամիրովը այս տարեկիսը քին բախում ունեցած էին, ինչ որ նեղ կացութեան մատնած էր Կրեմլինի ղեկավարները:

Քալանցեւը ըսած է, որ Չորեքշաբթի օրուան ժողովին Կանթամիրովը Կրոպչիի քաղաքապետ նշանակուած է: Ան դառնալով Կանթամիրովի յայտնած է, որ շատեր չէին հաւատար. թէ «Կիւնայնով» մը պիտի գոյացուի, «սակայն այսօր պայն ապահովեցինք միաձայնութեամբ եւ անկա մնալուն է. չէ»:

Կանթամիրովը հաստատած է, թէ Կիւնայնովը գոյացած է եւ ինք Քատիրովի հետ պիտի գործակցի:

Քատիրովը ըսած է, որ բանակցութեան ընթացքին ինք եւ Կանթամիրովը առաջարկած են Չեչենիային հեռանալ՝ շրջանի կայունութիւնը ապահովելու համար:

Ռուսիա կ'ըսէ, թէ կ'ուզէ Չեչենիոյ հարցը քաղաքականօրէն լուծել, սակայն ան կը մերժէ շրջանին անկախութիւնը հետապնդող ղեկավարութեան հետ տիպիկ ձեռնարկել: Անկախ յարաբերութիւններ հաստատած է չեչեն այն ղեկավարներուն հետ միայն, որոնք կ'ընդունին շրջանին մէջ Մոսկուայի գերիշխանութիւնը:

Սակայն այդ ղեկավարները յաճախ իրարու միջեւ տարակարծիք են:

## ՌՈՒՍԻԱ ԿՊՂՁՈՒՆԷ ՊԻԵԼՈՌՈՒՍԻՈՅ ԵՐԵՍՓՈՒԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՐԴԻՆԸՆԵՐԸ

ՄՈՍԿՈՒԱ, 18 (ՌՈՅԹԸՐԶ)։- Ռուսիա Չորեքշաբթի օր ողջունեց Պիելոուսիոյ մէջ անցեալ Կիրակի օր կայացած երեսփոխանական ընտրութիւններուն արդիւնքները եւ յայտնեց, որ արեւմուտքի կարգ մը դէտեքու կողմէ քննադատութիւնները անոնց կողմնակալութեան ցուցանիչ են:

ԵԱՀԿ եւ Եւրոպական Միութիւնը, որ միայն դէտեքու ցած մակարդակով խմբակ մը ղրկած էր, յայտնած է, թէ ընտրութիւնները միջազգային չափանիշներու համաձայն տեղի չեն ունեցած:

Մ. Նահանգները նաեւ յայտնած են, թէ պիտի չճանչնան արդիւնքները:

Սակայն Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութիւնը յայտնած է, որ ընտրութիւնները տեղի ունեցած են «ճանդարտօրէն եւ կազմակերպուած ձեւով»:

Պիելոուսիա եւ Ռուսիա կ'աշխատին միացեալ պետութիւն մը հիմնելու եւ Մոսկուա Միւսքի իշխանութիւններու կողքին կը կանգնի ընդհանրապէս:

Արտաքին գործոց նախարարութիւնը նշած է, որ ապօրինի միայն փոքր ղեկավար արձանագրուած են, չեչենիոյ, որ քուէարկողներու 60,6 աւ հարիւրի մասնակցութիւնը ցուցանիչ է, թէ ընտրութիւններուն արդիւնքները ի գորու պէտք է նկատել:

## ԼՈՆՏՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԱԿԱՐԱՆ

Լոնտոնի սակարանին մէջ, դրամանիշներու փոխանակման սակը հետեւեալն էր երեկ կէսօրին.

Ամերիկեան տոյարի փոխանակման սակերը.	
Եուրօ	0.838
Ֆրանսական ֆրանք	7.8211
Քանադական տոյար	1.5162
Գերմանական մարք	2.332
Նորվեգական ֆյորիկ	2.6275
Չեխիական ֆրանք	1.7882
Պոլիսական ֆրանք	48.098
Իտալական յիթ	2308.66
Ճափոնական եւեն	107.77
Շուեդական քուրոն	9.995
Նորվեգական քուրոն	9.561
Դանիական քուրոն	8.8704
Մեկ սրբիլին	1.4435

Մ. Նահանգներու նախագահութեան գլխաւոր երկու թեկնածուներուն՝ դեմոկրատ Ալ Կորի եւ հանրապետական ձորձ Պուշի միջեւ երեքշաբթի գիշեր կայացած է վերջին բանավէճը, որուն ընթացքին Կոր յարձակողականի դիմած է իր մրցակիցին դէմ, առողջապահութեան, կրթական մարմինի եւ հարկերու վերաբերելու հարցերով:

Նոյնմբեր 7ի նախագահական ընտրութիւններէն հապի 3 շաբաթ առաջ, երկու

թեկնածուներուն գլխաւոր նպատակը եղած է սիրաշահիլ այն քուէարկողները, որոնք տակաւին չեն որոշած, թէ որո՞ւ պիտի տան իրենց քուէները:

«Ռոյթթրօ» լրատու գործակալութիւնը, բանավէճէն կարճ ժամանակ ետք քաղաքական 6 մեկնաբաններու կարծիքը հարցուցած է: Անոնց հինգը յատկաօրէն Կորը յաղթական նկատած է: Վեցերորդ մեկնաբարը ըսած է, որ Կոր յաղթական դուրս եկած է

իր գաղափարներով, սակայն Պուշ աւելի համակրելի դուրս եկած է բանավէճէն: Ճնշումը յատկապէս մեծ եղած է Կորի վրայ, որ չէ կրցած առաջին երկու բանավէճերուն իսկապէս տպաւորել քուէարկողները:

Նորագոյն հարցախոյզերու արդիւնքները դարձեալ ցոյց կու տան, թէ Պուշ եւ Կոր գրեթէ նոյն համեմատութեամբ ժողովրդականութիւն կը վայելեն:

(ՌՈՅԹԸՐԶ)

## ԲԱՆՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ...

Շարունակուած Ա. Էջէն

Իսրայէլի շրջանային գործակցութեան նախարար Շիմոն Փերէս յոյս յայտնեց, որ պաղեստինցիներուն հետ գոյացած համաձայնութիւնը արդիւնաւորուի իսրայելու թեան բանակցութիւններուն վերսկսումով: Փերէս դիտել տուաւ, որ բանակցութիւնները պէտք է շարունակուին, նոյնիսկ եթէ կարելի չէ եղած Շարմէլ-շէյխ մէջ համաձայնութիւն գոյացնել բոլոր հարցերուն շուրջ:

նէր պէտք է տան:

## ԱՐԱՔԱԿԱՆ ՍԱՍՈՒԸ ՉԱՆՈՂԱԾ ԿԸ ՆԿԱՏԷ ՉԱՐԱՆԵՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՂՈՎԸ

Ծոցէն մինչեւ հիւսիսային Ափրիկէի մէջ յոյս տեսնող արաքական մամուլը երէկ ձախողած յայտարարեց Շարմէլշէյխի վեհաժողովը:

Թունուպեան օրաթերթ մը կը գրէր, որ դիւնապիտակաւ բոլոր քայլերը չեն կրնար ծածկել Շարմէլշէյխի հանդիպումին ձախողութիւնը, որովհետեւ անկէ ծնած համաձայնութիւնը պիտի չկարենայ վերջ տալ բախումներուն:

Մարոքեան եւ սէուտական օրաթերթեր եւս մութ գոյներով ներկայացուցին կասկածներ, շեշտը դնելով յատկապէս՝ Ուաշինգթոնի դերակատարութեան վրայ: Մեկնաբաններ դիտել տուին, որ վեհաժողովին արդիւնքը յաւելեալ փաստ է, որ Ուաշինգթոնը արդար եւ անկողմնակալ միջնորդ չէ Միջին Արեւելքի մէջ: Սէուտական «Ուաթան» օրաթերթը կը գրէր, որ Միացեալ Նահանգներ ամէն օր կ'որդեգրեն կեցածքներ, որոնք կը վիրաւորեն արաքներուն վզացումներն ու արձանապատութիւնը:

Եգիպտական «Ալ-Կար»-ը կը գրէր, որ պաղեստինեան ինթիֆաան շուտով մարտի լիք առձայն յոյս մը չէ, որովհետեւ անիկա կը մղուի պաղեստինեան արդար իրաւունքներուն վերատիրանալու համար:

Մարոքի մեկնաբան մը դիտել տուաւ, որ Քիւնթըն ձախողեցաւ եւ չկրցաւ իր թիրախին հասնիլ: Ան աւելցուց, որ Քիւնթըն մէկ նպատակ ունէր՝ Արաքաթէն իստուում մը առնել, որ ինթիֆաան պիտի մարի:

Միւս կողմէ, Լիպիոյ ղեկավար Մուսմար Քալաֆի յայտնեց, որ չաբաթավերջին Գաիիի մէջ տեղի ունեւայիք արաքական վե-

հաժողովին աւարտին պիտի հրապարակուի «տկար» յայտարարութիւն մը: Քալաֆի ըսաւ, որ յայտարարութեան սեւագիր օրինակը ուղարկուած է արաքական բոլոր երկիրներուն: Ան աւելցուց, որ յայտարարութիւնը պարզապէս Իսրայէլէն կը պահանջէ յարգել հողի փոխարէն իսրայելու իրաւունքները եւ դատել իսրայէլացի քանի մը ղեկավարներ (անանուն) պատերազմի ռմիրներու համար:

Քալաֆիի յայտարարութիւնը նեղի կը մատնէ արաք ղեկավարները, որոնց ժողովուրդները օրերէ ի վեր ցոյցեր կը կազմակերպեն եւ Իսրայէլի դէմ սրբապան պատերազմի հռչակում կը պահանջեն: Քալաֆի ըսաւ նաեւ, որ յայտարարութիւնը լեցուն է բառերով, որոնք միայն կը դատապարտեն եւ գործնական որեւէ միջոցառում չեն պահանջեր: Ան դիտել տուաւ, որ յայտարարութիւնը ինք հրապարակած է, յուսալով, որ վեհաժողովին մասնակցող արաք ղեկավարները վերատեսութեան կ'ենթարկեն պայն՝ աւելի խիստ ռճով հաղորդագրութիւն մը հրապարակելու համար:

ՄԱՐԳԿԱՅԻՆ իրաւանց Ուոշ խմբակը քննադատեց Իսրայէլը՝ պաղեստինցիներուն դէմ «մահացու ուժ» գործածելուն համար:

ԻԲԱՆԻ պաշտպանութեան նախարար Ալի Շամիսանի կոչ ուղղեց իսրայելական երկիրներուն քարիւղը իբրեւ վէպ գործածելու պաղեստինցիներուն պօրակցութիւն յայտնելու համար:

ՉԻԵԱՍՏԱՆԻ արտաքին գործոց նախարարութիւնը կոչ ուղղեց Շարմէլշէյխի համաձայնութեան արագ գործադրութեան, որպէսզի կարելի ըլլայ իսրայելութիւն ու կայունութիւն հաստատել Միջին Արեւելքի մէջ:

(ՌՈՅԹԸՐԶ)

## ԽԱՉՔԱՌԹԻ 4693 Պատրաստեց՝ Տ.Մ. ԱՂԱԶԱՐԵԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

- | ՇՈՐՀՈՆԱԿԱՆ  | ՈՒՂԱՇԱՅԵԱՑ  |
|---|---|
| 1. Ափրիկեան երկիր - Տիգրան Օտեանի գրչանունը:      | 1. Բարձր ծառատեսակ - Սաւառնակ առեւտրող:             |
| 2. Ճօճել, տատանել - Ծախու առ:                     | 2. Սեւ ազուա - Մկրտիչ Արմէնի երկերէն:               |
| 3. Իզական անուն - Փնջածեւ պտուղներով ծառ:         | 3. Խորթ մայր - Բաղմուխիւն:                          |
| 4. Չեռնհաս, մասնագէտ:                             | 4. Սեղծուած, շնչաւոր - Արեւմտեան զինուորական ուխտ:  |
| 5. Նախամայր - Շաղկապ - Լեցուն:                    | 5. Սրբերիոյ գետերէն - Ստացական ածական - Կոնարի ծառ: |
| 6. Ժամանակի միաւոր - Գարնային թռչուն:             | 6. Լծորդութիւն - Թթուահամ մանր պտուղ:               |
| 7. Խաղաղած պաշտօն - Մթերանոց:                     | 7. Յառուժ, անթարթ նալուածք:                         |
| 8. Գիւղաքաղաք - Գոճան - Կրկնուած բաղաձայններ:     | 8. Հեռացիր - Վաշտ, գունդ:                           |
| 9. Ընդհանուր ժողով - Ուրբ, համեմային բոյս - Կայթ: | 9. Անլուծելի - Կըրկնուած բաղաձայններ - Յետոյ:       |
| 10. Եւրոպական գետ - Ուրբ, համեմային բոյս - Կայթ:  | 10. Ֆրանսական գետ - Չայնայիլ - Թեթեւ բուռ:          |
| 11. Սուտանի լիճերէն - Չիւս ոտնածայր:              | 11. Երկկամուռ - Կրկնուած բաղաձայններ:               |

## ԹԻՒ 4692

## ԽԱՉՔԱՌԻՆ

## ԼՈՒԾՈՒՄԸ

## ՍԱԿԱՐԱՆ

Պէշրուքի սակարանին մէջ օտար դրամ-Գիշերու փակման սակագները հետեւեալն են:

Սուրիական թղթուկի	31.50 - 33.50 լ.ն.
Իրաքեան տիւար	50.00 - 51.00 լ.ն.
Պահրէյնեան տիւար	3990.00 - 4010.00 լ.ն.
Քուէյթեան տիւար	4878.42 - 4880.42 լ.ն.
Յորդանանեան տիւար	2118.24 - 2128.24 լ.ն.
Ա.Մ. Էմիրութեան տիւար	408.43 - 410.42 լ.ն.
Սէուտական ռիալ	399.90 - 403.99 լ.ն.
Օմանեան ռիալ	3900.00 - 3930.00 լ.ն.
Քաթարեան ռիալ	412.15 - 416.15 լ.ն.
Եգիպտական կիւն	400.72 - 402.72 լ.ն.
Անգլիական սթերլին	2179.99 - 2163.11 լ.ն.
Գերմանական մարք	655.47 - 657.69 լ.ն.
Նոլանտական ֆլորին	581.65 - 583.05 լ.ն.
Ֆրանսական ֆրանք	194.74 - 196.21 լ.ն.
Չեխիական ֆրանք	849.32 - 851.25 լ.ն.
Պելճիսական ֆրանք	31.63 - 31.74 լ.ն.
Դանիական քուրոն	230.22 - 250.12 լ.ն.
Սլովակական փիլիպս	8.02 - 9.04 լ.ն.
Թրքական լիրա	0.0365 - 0.0370 լ.ն.
Կիպրական փաուստ	2235.79 - 2236.83 լ.ն.
Իտալական հապար լիր	662.15 - 664.13 լ.ն.
Ճափոնական հապար եէն	13092 - 13095 լ.ն.
Ափրիկեան հապար ֆրանք	2450 - 2452 լ.ն.
Ամերիկեան տոյար	1501.00 - 1514.00 լ.ն.
Քանադական տոյար	991.50 - 992.56 լ.ն.
Աւստրալիական տոյար	783.88 - 785.60 լ.ն.
Եուրօ	1284.91 - 1286.47 լ.ն.

● ՈՍԿԻ	
Անգլիական մէկ ոսկի	105.000 - 115.000 լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	92.000 - 102.000 լ.ն.
Օմանեան մէկ ոսկի	81.000 - 91.000 լ.ն.
Մեքսիկական փետա	496.000 - 503.000 լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոյ ոսկի	13.250.000 - 13.750.000 լ.ն.
Մէկ օնս ոսկի	271.05 - 273.80 \$
Մէկ օնս արծաթ	4.85 - 4.89 \$

● ՍՈՒԿՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ	
Գիճի Ա. 62դում Գիճի Բ. 62դում	
Ա. կարգի	7 3/4
Բ. կարգի	7 7/8
քաժնեթուղթ	7 3/4